РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ДВЕНАДЦАТАЯ ГОДИЧНАЯ НАУЧНАЯ

КОНФЕРЕНЦИЯ

Сборник статей

ЕРЕВАН
2018

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

4–8դեկտեմբերի 2017 թ.

Հոդվածների ժողովածու

ԵՐԵՎԱՆ

ՀՌՀ Հրատարակչություն

2018

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ДВЕНАДЦАТАЯ ГОДИЧНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ

4–8 декабря 2017 г.

Сборник статей

ЕРЕВАН

Издательство РАУ

2018

УДК 30:009:06
ББК 6/8
Д 231

Печатается по решению Ученого совета и РИС РАУ

Редакционная коллегия:

А.Р. Дарбинян (председатель), П.С. Аветисян (заместитель председателя), Г.З. Саркисян, Э.М. Сандоян, Л.А. Алавердян, С.С. Аветисян, А.А. Симонян, М.Э. Авакян, К.А. Мирумян, К.С. Акопян, А.С. Берберян, А.К. Егиазарян, М.А. Восканян, А.М. Суварян, Ф.П. Тохян, А.Г. Тунян, С.Ш. Цагикян, И.Б. Петросян, Н.И. Кеворкова, М.В. Алекян, Е.Г. Маргарян, Л.С. Меликсетян, О.Л. Саркисян, С.Г. Оганесян.

Д 231 **Двенадцатая годичная научная конференция** (4–8 декабря 2017г.): Сборник научных статей: Социально-гуманитарные науки. Часть I. – Ер.: Изд-во РАУ, 2018. – 327 с.

Сборник печатается по материалам 12-ой Годичной научной конференции, проведенной в Российско-Армянском университете. Статьи публикуются в алфавитном порядке и под авторскую ответственность.

Публикация сборника осуществлена в соответствии с требованиями ВАК РА к сборникам научных трудов.

УДК 30:009:06
ББК 6/8

ISBN 978-9939-67-215-1

© Издательство РАУ, 2018

СОДЕРЖАНИЕ

УГОЛОВНОЕ ПРАВО

Аветисян С.С. Роль и значение прецедентных решений кассационного суда РА в контексте развития права, сдержек и противовесов органов государственной власти 12
Арустамян Р.С. Функции охраны правопорядка, укрепления законности и ее обеспечения 21
Հարությունյան Ս.Ա. Մասնավոր մեղադրանքի ինստիտուտը ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 31
Վարդանյան Հ.Գ. Համաձայնեցման վարույթի հասկացությունն ու մեղադրյալի միջնորդությունը որպես համաձայնեցման վարույթի կիրառման հիմք 43
Ոսկանյան Ա.Վ. Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար վարչական ու քրեական պատասխանատվության հարաբերակցությունն ու պատասխանատվությունից ազատելու հիմքերը 51
Кодолич Е.Н. Некоторые особенности обеспечения запрета пропаганды и публичного демонстрирования нацистской атрибутики и символики в республике Беларусь 59
Թադևոսյան Զ.Ա., Հայրապետյան Գ.Ք. Անչափահասներին քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժական քաղաքանության առանձնահատկությունները 64
Цагикян С.Ш., Джагарян И.А. Некоторые проблемы института использование рабского труда в армянском и российском уголовном законодательстве 72

ГРАЖДАНСКОЕ ПРАВО

Алексанян Ш.С., Айрапетян Ю.В. Трансформация принципа непрерывности судебного разбирательства в гражданском процессе 81
Айрапетян Ю.В., Будагян Г.Г., Акопова Э.А. Аудио- и видеозаписи как средства доказывания в гражданском процессе Российской Федерации и Республики Армения 89
Айрапетян Ю.В., Григорян Л.Н. К вопросу о принципе права быть выслушанным в гражданском процессе 97
Давтян А.Г., Амирханян А.К. Предмет и стадии доказывания в современном гражданском процессе 105
Давтян А.Г., Антонян Г.В. Актуальные доктринальные принципы гражданского процесса 111
Давтян А.М., Багдасарян Н.А., Манукян А. Проблемные вопросы суррогатного материнства в РФ 119

Маргарян М.Г., Тунян А.Г. Проблемы разграничения ничтожных и незаключенных сделок в правовых системахРоссийской Федерации и Республики Армения.....126
Оганесян К.М., Киракосян А.Э. Авторские права и режим имущества супругов.....133
Սահակյան Ն.Մ. Պարտավորական հարաբերությունների միակողմանի դադարումը աշխատանքային իրավունքի բնագավառում 142
Тунян А.Г. Конституционные основы мер гражданско-правовой ответственности в Республике Армения.....150
Хачатрян Л.С. Историческое развитие принципа наиболее тесной связи.....157

КОНСТИТУЦИОННОЕ И МУНИЦИПАЛЬНОЕ ПРАВО

Բաղդասարյան Ս.Հ. Պաշտպանության կազմակերպման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում 162
Довгялло М.М. Правовые аспекты экологического контроля в странах ЕС 170
Ерицян А.А., Тохян Ф.П. Проблемы реализации конституционных гарантиий прав человека в РА и в РФ 179
Камалян М.А. Проблемы прекращения гражданства Российской Федерации детей, усыновленных иностранными гражданами.....185
Цатурян А.А. Место и роль парламента в системе разделения властей.....190

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ И МИРОВАЯ ПОЛИТИКА

Ахвердян А.А., Карапетян Р.К. Китай и международные отношения на 10 лет вперед 196
Ованнисян А.Ю., Алавердян Л.А. «Мадридские принципы»: адекватность и реализм или искажение и схематизм 202
Sahakyan I. A steady emergence of a new cold war between USA and Russia 210
Khumaryan V. Securitisation of the rebellion: armenia’s “terrorism” discourse in 2016.....218

ПОЛИТОЛОГИЯ

Агасарян В.К. Идеология Абдуллы Оджалана и партия демократический союз 224
Հայրապետյան Յու.Ս. ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի դերը և մասնակցությունը 2011–2013թթ. «արաբական գարուն»-ի իրադարձություններում 233
Davtyan V. The problems of energy consumption in boudrillard’s philosophy.....245

Дарбинян Э.Т., Саркисян О.Л. Некоторые особенности армиестроительства Древней Греции 251
Kazhoyan I. The realm of political myth in XXI century 258
Назаретян Г.А. Армянский опыт конституционных изменений. традиционные и альтернативные механизмы информирования населения 263
Рухкян Л.М. Культурная идентичность как фундамент национальной безопасности 269

ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА

Абелян Н.А., Гамбарян А.С. Дееспособность пожилых лиц и проблемы ее ограничения в свете защиты прав пожилых в Республике Армения 275
Гамбарян А.С., Абелян М.Н. Эмбрион – часть тела или отдельное тело 282
Գասպարյան Ա.Ա. Տարեց մարդիկ որպես բռնության զոհեր 290
Даллакян Л.Г. Дискуссионные вопросы нормативности некоторых видов правовых актов 300

ЖУРНАЛИСТИКА

Авакян М.Э. Научный подход в формировании понимания национального достояния на примере публицистических материалов: опыт истории и проблемы современности 310
Երիցյան Ս.Ս. Հեռուստատեսության զարգացման միտումները 314
Рухкян Э.А. Жанрово-тематические и форматные особенности на армянском телевидении 317
Тадевосян М.Р. Деятельность СМИ в контексте современных информационных потоков 324

КОНСТИТУЦИОННОЕ И МУНИЦИПАЛЬНОЕ ПРАВО

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ս.Հ. Բաղդասարյան

Հայ-Ռուսական համալսարան
sasun.baghdasaryan@rau.am

ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտական հոդվածը նվիրված է պետության (Հայաստանի Հանրապետություն) պաշտպանության գործառույթին և պետական մարմինների իրավասության առանձնահատկություններին: Աշխատանքում նաև կարևոր նշանակություն է տրված պետության և հասարակության փոխհարաբերություններին՝ երկրի պաշտպանության կազմակերպման գործընթացում: Որպես նորմատիվ իրավական բազա հետազոտված են ինչպես նախկին, այնպես էլ գործող և նոր ընդունված իրավական ակտերը (Սահմանադրություն, օրենքներ և այլն):

Հիմնաբառեր՝ պետություն, պաշտպանություն, լիազորություններ, իրավասություններ, բանակ, հասարակություն, նախապայմաններ:

Ազգի գոյատևման հիմնական գրավականը, պատմության հորձանուտներում փրկության միակ ելքն անկախ, ինքնիշխան, ուժեղ պետականություն ունենալն է: Պետականություն հռչակելու իսկ պահից այն կարիք ունի ոչ միայն տեսագաղափարական հիմնավորումներով «փայփայանքի», այլև արյան գնով պաշտպանության: Հայաստանի Հանրապետության, որպես երիտասարդ և նորաստեղծ պետության առջև կանգնած խնդիրներից առաջնայինը ազգային պետականության պաշտպանության գործառույթն է, ինչը պայմանավորված է պատմական և ռազմաքաղաքական բազում գործոններով [1]: Այս խնդրի հաջող լուծումն անկախությունը նոր-նոր ձեռք բերած պետության համար պետք է որ ստեղծի նախապայմաններ ներքին գործառույթների արդյունավետ իրականացման համար: Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո երկիրը անհրաժեշտություն ունեցավ պաշտպանության, որը

քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների համակարգ է՝ ուղղված երկիրը ռազմական պաշտպանությանը նախապատրաստելուն, ինչպես նաև պետության, նրա տարածքային ամբողջականության ու անձեռնմխելիության զինված պաշտպանությունը [2]: Այս համակարգով իրականացվող գործողությունները հիմնականում ուղղվում են հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովմանը: Պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրության հիման վրա:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 1997 թվականի մայիսի 29-ին: Այս օրենքի համաձայն ներկայացվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության կարևորագույն հիմքերը:

ՀՀ պաշտպանության մասին օրենքը մեծապես կարևորվում է նաև այն տեսանկյունից, որ այստեղ ամրագրվում են նաև ՀՀ զինված ուժերի դերն ու խնդիրները, դրանց կառուցվածքը և ղեկավարումը, պաշտպանության բնագավառում օրենսդրության խախտումների համար պատասխանատվությունը:

Այս ամենի հետո պետք է ավելացնել, որ Հայաստանի Հանրապետությունը որպես անկախ պետություն ճանաչվեց 1991 թվականին, որի միջոցով հնարավորություն ստացավ նոր գործնական և ինչու չէ նաև իրավական հեռանկար բացել ազգային բանակի ստեղծման հարցում: Բացի այդ, հենց այդ նույն տարում ձևավորվեց Երևանի հատուկ գունդը, որը մեծ նշանակություն ստացավ հետագա բանակաշինության հարցում: Արդեն հաջորդ տարում Հայաստանի Հանրապետության Կառավարության հատուկ որոշմամբ ձևավորվեց Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության պետական կոմիտե: Չնայած պետք է նշել, որ նման մի կոմիտե արդեն գործում էր Լեռնային Ղարաբաղում:

Այս կոմիտեի ձևավորումն արդեն նպաստում էր հետագայում Հայաստանում Պաշտպանության Նախարարության ձևավորմանը:

Հայաստանի անկախացումից հետո անհրաժեշտություն առաջացավ առաջին հերթին ձևավորել բանակ, որի ստեղծումը պետք է ունենար արդյունավետ ուղիների մի ամբողջ համակարգ, մասնավորապես՝ բանակի ստեղծման միջոցով անհրաժեշտ էր ամրագրել հատուկ իրավական դաշտի կանոններն ու նորմեր, պետք է ձևավորվեին ղեկավարման բարձրագույն մարմիններ, մասնավորապես Գլխավոր Շտաբը: Այսպիսով ձևավորվեց Հայոց բանակը, որի դրական կողմերից մեկն այն էր, որ մշակվեցին խմբավորումների, զորամասերի մարտական կազմերը և կառուցվածքները, դրվեց զորատեսակների և ծառայությունների ձևավորման սկիզբը, անցկացվեց առաջին զորակոչը, ինչպես նաև

կարևորվեց առաջին սահմանապահ զորամասերի կազմավորումը: Այսպիսով, երկրում պաշտպանություն ապահովելու համար սահմանվեցին որոշակի խնդիրներ, մասնավորապես երկրի և երկրի քաղաքացիների անվտանգության ապահովման տեսակետը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության տարածքում այլ զինվորական միավորումների կազմակերպմանը, ապա կարող ենք ասել, որ դա օրենքով արգելվում է: Այսպիսով, ՀՀ պաշտպանության կազմակերպումը իր մեջ ներառում է որոշակի գործողություններ, որոնցից առանձնացնենք հետևյալները.

– Անհրաժեշտ է մշակել ռազմական համապատասխան քաղաքականություն ծագած այս կամ այն ռազմական դրության ժամանակ,

– Ռազմական իրադրության ժամանակ որևէ վտանգի առկայության դեպքում կատարել որոշակի կանխատեսողական և գնահատողական աշխատանքներ,

– Կարգավորել պաշտպանության ոլորտին առնչվող ցանկացած իրադրության իրավական դաշտը,

– Ստեղծել Հայաստանի Հանրապետությունում այնպիսի ծառայողական համակարգեր, որոնք հնարավորություն կտան զինված ուժերում ծառայող անձանց բարձրացնել իրենց պատրաստակամության մակարդակը Կազմակերպել զորակոչեր և նման գործողություններն անցկացնել միայն ու միայն պայմանագրային հիմունքներով և օրենքով սահմանված կարգերով,

– Համագործակցել միջազգային կառույցների հետ, որը հնարավորություն կտա ստեղել կոլեկտիվ պաշտպանություն և համատեղ պաշտպանություն,

– Իրականացնել տարածքային և քաղաքացիական տարբեր պաշտպանական միջոցառումներ

– Հանրապետությունում պետք է ձևավորվեն նաև ռազմաարդյունաբերական համալիրներ, Պետք է երկրի ներսում ապահովել պետական և ծառայողական գաղտնիքը,

– Երկրում բոլոր զինվորական ծառայողականները և ռազմական ուժերը պետք է ապահովված լինեն համապատասխան ռազմական տեխնիկաներով և հագեցված սարքավորումներով:

Հայաստանի Հանրապետության զինվորական ուժերի անմիջական ղեկավարությունն իրականացնում է դեռևս ՀՀ նախագահը և ՀՀ կառավարությունը՝ իրենց հատուկ լիազորությունների շրջանակում:

ՀՀ նախագահը կազմակերպում և համախմբում է պետական մարմինների գործառնությունները:

– Նախագահի կողմից է նշանակվում և ազատվում զինված ուժերի հրամանատարական կազմը, բարձրագույն մարմինները,

– Նախագահի ղեկավարության ներքո է տեղի է ունենում բարձրագույն զինվորական կոչումների, պատվոգրերի, ինչպես նաև ՀՀ շքանշանների և մեդալների շնորհումը,

– Նախագահի ղեկավարության և անմիջական վերահսկողության ներքո են իրականացվում բանակցություններ, կնքվում և ստորագրվում պաշտպանությանն առնչվող տարբեր միջազգային և միջպետական համաձայնագրեր,

– Բացի այդ գործողություններից, նախագահի կողմից են հայտարարվում ՀՀ քաղաքացիների ժամկետային զինվորական ծառայության զորակոչն ու սահմանված ժամկետներով ներկայացվող զորացրումը,

– և այլն:

ՀՀ-ում գործող ուժային կառույցը՝ գործադիր իշխանությունը հիմնականում զբաղվում է պետության ներքին և արտաքին քաղաքականության, ինչպես նաև պաշտպանության, ազգային անվտանգության երաշխավորման, սոցիալ-տնտեսական զարգացման ապահովմամբ, այսինքն օրենքով սահմանված դեպքերով ՀՀ գործադիր իշխանությունը ապահովում է Հայաստանի պաշտպանության ապահովումը, որն անմիջականորեն ուղղորդվում է ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության ռազմավարությունների մշակման և դրանց անկացման առավելագույն արդյունավետ մեթոդների կազմակերպման միջոցով[3]:

Կառավարությունը, որը հանդիսանում է գործադիր իշխանության կատարող բարձրագույն մարմին, ունի որոշակի լիազորություններ, որոնք ուղղորդվում են պետական և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով և այլ իրական ակտերով սահմանված կարգով՝ ՀՀ կառավարությունը ապահովում է Հանրապետության պաշտպանությունը և ազգային անվտանգությունը[4]: ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության ապահովման իրականացման նպատակով կառավարությունը մշակում և հաստատում է ռազմական քաղաքականության հիմնական ուղղությունները, զինված ուժերի զարգացման, տեղակայման, օգտագործման ծրագրերը, սահմանում զինված ուժերի թվաքանակը, կառուցվածքը և այլն:

Ինչ վերաբերում է զինված ուժերի ղեկավարմանը, ապա այն իրականացնում է ՀՀ պաշտպանության նախարարը, որն էլ իր գործողությունները ծավալում է նախարարության ներքո, այն անմիջականորեն պատասխանատվություն է կրում հանրապետության պաշտպանության ապահովման, զինված ուժերի ստեղծման, զարգացման և մարտական պատրաստականության համար:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ինչպես արդեն վերևում ներկայացրեցինք բազմաթիվ գործառնություններ են կատարվում, որոնք մասնավորապես ուղղորդվում են այս կամ այն խնդրի լուծմանը, այդ տեսակի գործողություններից առանձնացնենք նաև հետևյալները.

1. Նախարարությունն իրեն վերապահված իրավունքով և լիազորություններով կազմակերպում է և մանրամասնորեն վերահսկողություն է սահմանում զինված ուժերի ինչպես ֆինանսական, այնպես էլ տեխնիկական ու հագեցած սարքավորումներով ապահովվածության ուղղությամբ,

2. Նախարարության կողմից է իրականացվում նաև զինված ուժերում նրանց օպերատիվ ապահովումը, ինչպես նաև ամբողջ անձնակազմի հայրենասիրության դաստիարակման ուղիների բացահայտումը, որի միջոցով էլ հնարավորություն է տրվում բարձրացնել նրանց պատրաստվածության մակարդակը:

3. իրականացնում է ՀՀ զինված ուժերի կանոնագրքերով և ՀՀ օրենսդրության մյուս ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

Պաշտպանության նախարարության գլխավոր շտաբը բավականին կարևոր գործողություններ է իրականացնում, որոնք ևս ուղղորդվում են ՀՀ-ում ռազմական այս կամ այն գործողության ժամանակ արդյունավետ ուղիների բացահայտմանը և դրանց իրականացման համար համապատասխան լուծումների դիրքավորմանը, այժմ հակիրճ նկարագրենք նրանց գործողությունների շրջանակները.

1. Գլխավոր շտաբի կողմից մշակվում են զինված ուժերում, ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ պատերազմական իրավիճակներում զինված ուժերի օգտագործման, նրանց հետ աշխատանքի կատարման ծրագրերը,

2. Նրանց անմիջական ղեկավարության ներքո են կատարվում զորքերի ռազմական իրավիճակներում օպերատիվ կառավարման փորձերը

3. Գլխավոր շտաբի կողմից է իրականացվում զինված ուժերի զորահավաքային միջոցառումները

4. Բացի այդ, գլխավոր շտաբն իր լիազորությունների սահմաններում կարող է իրականացնել այնպիսի գործողություններ և անվտանգության ամրապնդման հետ կապված միջոցառումներ, որոնք անմիջականորեն ամրագրված են օրենքով և իրավական ակտերով,

Հայաստանի Հանրապետությունում ՀՀ պաշտանության նախարարությունը, տարբեր ռազմական և զինվորական ստորաբաժանումները, զորախմբերն ու զորամիավորումները, ինչպես նաև զինվորական կառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, նաև ռազմաուսումնական հաստատությունը-

ների ամբողջ համակարգը ներառվում է զինված ուժերում, որոնք պատերազմական գործողությունների ժամանակ միասին պաշտպանում են մեր երկիրը:

Հայաստանի Հանրապետությունը մշտապես գտնվելով ռազմաքաղաքական լուրջ պատերազմական միջավայրում մշտապես պահանջում է պաշտպանական միջոցառումների համալիր ծրագրավորված պլանների առկայությունը, որոնք այս կամ այն կերպով պետք է առնչություն ունենան պատերազմական վիճակում պաշտպանության կազմակերպման արդյունավետության հետ: Պատմությունից մեզ արդեն հայտնի է դարձել այն փաստը, որ նախագահական, խորհրդարանական պետությունները տարբեր ռազմական գործողություններում և պատերազմական իրավիճակներում կարող են կամ հաղթել, կամ էլ ձախողել ռազմական ծրագրերը:

Ինչպես վկայում է ՀՀ սահմանադրությունը, մասնավորապես 155 հոդվածը՝ զինված ուժերը գտնվում են կառավարության ենթակայության ներքո, իսկ զինված ուժերի ղեկավարումը Անվտանգության խորհրդի կողմից սահմանվող պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների շրջանակում իրականացնում է պաշտպանության նախարարը: Ինչպես արդեն նշեցինք ՀՀ պաշտպանության նախարարությունում ձևավորված գլխավոր շտաբը համարվում է զինված ուժերի բարձրագույն մարմինը, որտեղ հիմնական որոշումները իրականացվում է շտաբի պետի կողմից, որը վարչապետի առաջարկությամբ է ընտրվում:

Երբ երկրում տիրում է խաղաղ պայմաններ, կամ ոչ պատերազմական իրավիճակ, ապա գլխավոր շտաբի պետը ենթարկվում է պաշտպանության նախարարին, սակայն այլ բան է երբ երկրում տիրում է ռազմաքաղաքական կամ պատերազմական իրավիճակ, մասնավորապես պատերազմի ժամանակ գլխավոր հրամանատարի կարգավիճակին համահավասարեցվում է երկրի վարչապետը, որին տրվում են նույն լիազորություններն ու իրավունքները, ինչը որ ունի պաշտպանության նախարարությունը: Կառավարման խորհրդարանական համակարգում զինված ուժերի ենթակայությունը կառավարությանն ավելի հեշտ է ապահովել, քան դեռևս ՀՀ-ում գործող համակարգում:

Այսպիսով, նկատում ենք, որ նախագահական համակարգ ունեցող երկրներում հնարավորություն է տրվում վարչապետին փոխարինել գլխավոր հրամանատարին, սակայն խորհրդարանական երկրներում նման տեսակի հարցեր չեն առաջանում, քանի որ նման երկրներում հիմնական ուժերը կենտրոնացվում են միայն և միայն կառավարությանը, որի ձեռքում էլ կենտրոնացվում են երկրի ինչպես տեխնի-

կական հագեցվածության, ռազմական սարքավորումների, այնպես էլ ֆինանսական ռեսուրսները:

Այստեղ պետք է առանձնացնել նաև ՀՀ կառավարությանը, մասնավորապես վարչապետին, ում դերը կարևորվում է կառավարման համակարգում, նա այն անդամն է, ով ընտրվում է խորհրդարանի կողմից կամ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների հիման վրա:

Բացի այդ, պետք է նշել նաև որ վերջինիս անմիջական ենթակայության ներքո է Անվտանգության խորհուրդը իրենց վերապահված լիազորություններով գործառնություններ ծավալում: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այն կարևոր հանգամանքին, որ կոալիցիոն կառավարությունները մեծ կարիք են զգում վարչապետի, քանի որ նա լուծում է երկրում առկա առանցքային խնդիրները, և նրա անմիջական լիազորությունների ներքո է գտնվում նաև երկրում պաշտպանության համակարգի արդյունավետ կառավարումը:

Բացի դրանից, նա հետևում է Սահմանադրության դրույթների պահպանմանը և դրանով նպաստում հասարակական կյանքում սահմանադրական արժեքների իրականացմանը և արմատավորմանը: Վարչապետն ունի բավականին ուժեղ դիրք, բայց նա, ի տարբերություն դեռևս գործող համակարգում Հանրապետության նախագահի, մշտապես գտնվում է պառլամենտական վերահսկողության ներքո: ՀՀ Սահմանադրությունով վարչապետը կարող է փոփոխվել քաղաքական դրդապատճառներով, իսկ գործող համակարգում Հանրապետության նախագահը՝ ոչ: 2015թ. սահմանադրությունով ստեղծված կառավարման համակարգի պայմաններում ունենք միասնական գործադիր իշխանություն՝ առանց դուալիստական գործադիր իշխանության վտանգի, հատկապես երկրի համար կենսական կարևորություն ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արտաքին քաղաքականությունը, ազգային անվտանգությունը և պաշտպանությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Վաղարշյան Ա.Գ.* Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918–1920թթ.): Եր.: ԵՊՀ հրատ.ԵՊՀ, 2012թ.:
2. Հռչակագիր« Հայաստանի Անկախության մասին», ընդունված՝ 23.08.1990թ.:
3. *Այվազյան Ն.Ա.* ՀՀ Սահմանադրական իրավունք, «Տիգրան Մեծ» հրատ., Եր., 2016թ.:
4. ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Եր., 2014թ.:

THE STATE'S PROTECTION FUNCTION AND PECULIARITIES IN THE REPUBLIC OF ARMENIA

S. Baghdasaryan

ABSTRACT

The scientific article is devoted to the function of the state (Republic of Armenia) defense and the peculiarities of the competence of state bodies. The work also has a great importance in the relationship between the state and the society in the process of organizing the country's defense. As a normative legal framework, both former and existing legal acts have been studied.

Keywords: state, defense, competence, normative legal framework, peculiarities.